# «ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՓՏԱԾ Է (ԿՈՌՈՒՄՊԱՑՈՒԱԾ), ԱՊԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԾԱՌԱՅՈՒՄ Է ՕՏԱՐ ՇԱՀԵՐԻ»

*Posted on September 14, 2020 by Keghart*



**Category:** Opinions

***Սոյն հարցազրոյցի արտատպութեան համար արտօնութիւն խնդրած ենք Պրն. Յարութ Պրոնոզեանէն, բայց այդ անպայմանօրէն չի նշանակեր թէ կը բաժնենք թերթին գաղափարախօսութիւնը կամ քաղաքական հայեացքները*:- Խմբ.**

«**Անկախ**», 11 Սեպտեմբեր 2020

*Ամերիկահայ բնապահպան, գէոքիմիական/էկոլոգիական ինժեներ (երկրաքիմիական/բնապահպանական ճարտարագէտ) Յարութ Պրոնոզեանը (Բրոնոզեան) «Անկախ»-ի հետ զրոյցում անդրադարձել է Ամուլսարի խնդրին, Սփիւռքի գլխաւոր յանձնակատարի յայտարարութիւններին եւ Հայաստան-Սփիւռք ներկայ յարաբերութիւններին, իշխանութեան եկած ուժերի եւ Սորոսի միջեւ կապին, ազգային իշխանութեան ձեւաւորման հրամայականին։*

**-Պարոն Պրոնոզեան (Բրոնոզեան), Դուք Ամուլսարի հարցը բարձրացնում էիք դեռեւս նախորդ իշխանութիւնների ժամանակ եւ իբրեւ մասնագէտ՝ փորձում իշխանութիւններին ու ժողովրդին բացատրել հանքի շահագործման վտանգների մասին: Իշխանափոխութիւնից յետոյ թւում էր, թէ Ամուլսարի հարցը վերջնականապէս կը հանգուցալուծուի, բայց այսօր այն կարծես մտել է փակուղի: Ինչո՞ւ հարցն ի վերջոյ լուծում չի ստանում:**

-Ես «Լիդիան»ի գործունէութիւնը սկսել եմ ուսումնասիրել դեռեւս 2014 թուականի վերջերից, իրենց հետ նամակագրութիւն եմ հաստատել, ուսումնասիրել եմ բոլոր փաստաթղթերը, իսկ վերջերս իմ միջոցներով նաեւ միջազգային առաջատար 4 մասնագէտների եմ վճարել, որոնք ուսումնասիրել են բոլոր փաստաթղթերը, գնահատումներ են կատարել եւ ներկայացրել արդիւնքները: Դրանք վկայում են մեծ վտանգների մասին:

«Լիդիան»ի և ՀՀ կառավարութեան միջեւ 2016 թուականի Ապրիլի 29-ին ստորագրուած պայմանագիրը թերի է եւ ենթակայ է խզման, քանի որ «Լիդիան»ը պայմանագիրը ստորագրելու ժամանակ հանքի շահագործման վերաբերեալ ոչ բոլոր հետազօտութիւններն ու եզրակացութիւններն է կատարած եղել: Իսկ աշխարհում չկայ նման դէպք, երբ պայմանագիր կնքուի, բայց միւս կողմը ամբողջական տեղեկատուութիւն չունենայ գործունէութեան վերաբերեալ:

Երկրաքիմիայի (գէոքիմիա) ուսումնասիրութիւնը դեռեւս վերջնական չէ, պէտք են յաւելեալ ուսումնասիրութիւններ նաեւ թթուային ցամաքեցման (դրենաժ), ջրային հաւասարակշռութեան (բալանս) ուղղութեամբ և այլն:

Այսինքն, «Լիդիան»ը հանքը շահագործելու թոյլտուութիւն է ստացել անբաւարար տեղեկատուութեամբ, հետեւաբար հանգիստ կարելի է այդ թոյլտուութիւնը չեղարկել:

Խնդիրներ շատ կան: Եթէ այդ հանքավայրը լինէր մէկ այլ տեղ, միգուցէ վտանգը նուազագոյն լինէր: Բայց հանքավայրն այնպիսի տեղում է, որ մեծ վնաս է հասցնելու

Հայաստանի ջրային հարստութեան:

Բացի այդ, «Լիդիան»ը որեւէ փորձառութիւն չունի, ոչ մի անգամ միջազգային չափանիշերով որեւէ բան չի արել, բայց անընդհատ խօսում է միջազգային չափանիշերից: Վերակառուցման եւ Զարգացման Եւրոպական Դրամատունը (EBRD), որ ներդրում էր արել այս ծրագրում, իր ներդրումը հանեց մօտ մէկ ամիս առաջ: Միջազգային Ֆինանսական Ընկերակցութիւնը (կորպորացիա, IFC), որը ներդրում էր արել այս ծրագրում, նոյնպէս հետ քաշուեց 2017-ին: Իսկ 2005-ին «Լիդիան» ը Ամուլսարի այս ծրագիրը սկսել է ոսկու արդիւնահանման աշխարհի խոշորագոյն ընկերութեան՝ Newmont-ի հետ: Նրանք նոյնպէս դուրս եկան այս նախագծից 2010 թուականին: Դա ցոյց է տալիս միջազգային դրամատների եւ Newmont-ի անվստահութիւնը «Լիդիան»ի եւ Ամուլսարի նախագծի վերաբերեալ:

Այսինքն, բոլոր փաստերը վկայում են, որ կան շատ լուրջ վտանգներ ու խնդիրներ, իսկ Հայաստանի կառավարութիւնը դեռ մտածում է: Ինչի՞ մասին է մտածում: Փոխանակ խնդիրը լուծեն, աւելի են խորացնում իրենց անորոշութեամբ, հետեւաբար իրենք հաւասարապէս պատասխանատու են այդ վտանգների ու խնդիրների համար:

**-Իշխանափոխութիւնից յետոյ Դուք եկաք Հայաստան եւ Ամուլսարի հարցով հանդիպումներ ունեցաք ՀՀ կառավարութեան ներկայացուցիչների հետ: Ի՞նչ տպաւորութիւն ստացաք այդ հանդիպումներից, ի՞նչ արդիւնք ստացուեց:**

-Ոչ միայն ես, այլեւ Ամուլսարի հարցն ուսումնասիրող 4 մասնագէտներից երկուսն ինձ հետ էին: Մենք հանդիպեցինք Էրիկ Գրիգորեանի, Տիգրան Աւինեանի, Էներգետիկայի նախարարութեան ներկայացուցիչների հետ, ներկայացրեցինք մեր հետազօտութեան արդիւնքները, բացատրեցինք, որ մեծ վտանգներ կան: Բայց ինչպէս հասկացայ, Աւինեանն ի սկզբանէ «Լիդիան»ի կողմն էր, Էրիկ Գրիգորեանն էլ յստակ դիրքորոշում չէր արտայայտում:

Ես այսօր էլ շարունակում եմ պնդել, որ յանուն Հայաստանի շահի՝ այս ծրագիրը պէտք է չեղարկել: Կառավարութիւնը պէտք է կարողանայ որոշում ընդունել: Բայց ինչպէս երեւում է, իրենք չեն եկել խնդիրները լուծելու, եկել են դեռ մի բան էլ այդ խնդիրները խորացնելու համար:

**-Պարոն Պրոնոզեան (Բրոնոզեան), հայրենադարձութեան թեման Ձեր գործունէութեան առանցքային կողմերից է: Դուք երկար տարիներ վարել էք նաեւ հաղորդաշար, որը կոչւում էր «Վերադարձ Հայաստան»: Ինչպէ՞ս էք գնահատում Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատար Զարեհ Սինանեանի վերջին յայտարարութիւնները, ըստ որոնց՝ հայրենադարձութեան խթանումը առաջնահերթ խնդիրներից չէ, Հայաստանը պատրաստ չէ լայնածաւալ հայրենադարձութեան եւ այլն:**

-Նման բան ասելով՝ ինքն արդէն իսկ պատնէշ է դնում, որ սփիւռքահայը մտածի գալ Հայաստան: Փոխանակ քաջալերեն, հակառակն են անում: Փոխանակ հիմնական,

երկրի ժողովրդագրութեան (դեմոգրաֆիա) լուրջ ծրագիր պատրաստեն, Սփիւռքի տարբեր մասնագէտների հետ կապեր հաստատեն, միանգամից պատնէշ են դնում: Վարչապետ Ն. Փաշինեանը սկզբում անընդհատ հայրենադարձութեան մասին էր խօսում, հիմա արդէն այդ հարցն արդիական չէ իրենց համար, ինչն ապացուցում է, որ նրանք լուրջ չեն Հայաստանում եւ Սփիւռքում դրական փոփոխութիւններ կատարելու հարցում եւ չունեն յստակ մշակուած ծրագրեր:

Այս իշխանութիւնները չեն ուզում երկրի խնդիրները լուծել, որովհետեւ չունեն ազգային գաղափարախօսութիւն, մտածողութիւն եւ նպատակներ: Այդ պատճառով երկիրը անորոշ իրավիճակում է գտնւում բոլոր ոլորտներում եւ ուղղութիւններում:

Սփիւռքահայից Հայաստան բերողը նիւթականը չէ: Զգացականն այստեղ շատ աւելի զօրաւոր է: Ես ինչո՞ւ եմ պարտականութիւն զգում իմ երկրի նկատմամբ, ինչո՞ւ եմ հարիւրաւոր, հազարաւոր ժամեր տրամադրում Ամուլսարի ծրագիրը կարդալու համար, ինչո՞ւ եմ մասնագէտներ վարձում, որ ուսումնասիրեն խնդիրը, ի՞նչ շահ ունեմ ես: Ո՛չ մի շահ, շահը Հայաստանի ապագան է ու անվտանգութիւնը:

Սփիւռքի հետ պէտք է աշխատել: Ինչո՞ւ փակուեց Սփիւռքի նախարարութիւնը, Մշակոյթի նախարարութիւնը: Դա արդէն ազդակ էր, որ սա ապազգային իշխանութիւն է: Նախկինում, երբ նախարարութիւնը կար, աւելի լուրջ կապեր կային: Չնայած այն ժամանակ էլ հայրենադարձութեան ծրագիր չկար: Ներկայումս պէտք է հայրենադարձութեան լուրջ ծրագիր մշակել թէ՛ Հայաստանում, թէ՛ Սփիւռքում: Եթէ պիտի ձուլուենք, ապա ի՞նչ ծրագիր կայ դա կանխելու համար: Չձուլուելու համար նախեւառաջ պէտք է ունենալ ամուր, ազգային պետութիւն:

**- Դուք նախորդ իշխանութիւնների օրօք նոյնպէս կոշտ քննադատութեամբ էիք հանդէս գալիս: Այնուամենայնիւ, որեւէ դրական փոփոխութիւն այս իշխանութեան օրօք չէ՞ք տեսնում: Որեե բան չի՞ փոխուել դէպի լաւը:**

-Դրական բաները պէտք է տեսանելի լինեն: Ամենակարեւորը տնտեսական զարգացումը պէտք է լինէր, որը չկայ: Սփիւռքի հետ մասնաւոր կապեր չկան, յստակ ծրագրեր չկան: Ամէն ինչ միայն խօսքով է, ցոյց տալով, բայց ոչ իրական աշխատանքով ու արդիւնքներով: Իսկ խօսելով ու ֆեյսբուքով (դիմատետր) երկիր չես կարող կառավարել, պէտք է աշխատես, պէտք է ծրագրեր ունենաս եւ հաւաքագրես որակաւորուած եւ փորձառու մասնագէտներ, անկախ նախկին կամ ներկայ իշխանութիւնից: Սեւերի ու ճերմակների բաժանելով՝ երկիր չես կառուցի: Հիմա ով քննադատում է, ուրեմն նախկի՞ն է: Իրե՞նք ինչով են տարբերւում նախկիններից: Ես պայքարել եմ նախկին վարչակարգի դէմ եւ հիմա դէմ եմ այս մէկին: Մեզ պէտք է հայրենասէր ու որակաւոր իշխանութիւն, ազգային իշխանութիւն: Իսկ այն, ինչ այս իշխանութիւններն անում են, արդէն պարզորոշ երեւում է, որ Սորոսի գաղափարախօսութիւնն է: Իշխանութեան մէջ սորոսականների ներգրաւումը ցոյց է

տալիս, որ ամէն ինչ գնում է ապազգային ուղղութեամբ: Այսօր ազգային ու ապազգային գաղափարախօսութեան միջեւ պայքար է, և իրենք ազդում են մտածելակերպի վրայ, քանդում են ինքնութիւնը և ապագայի տեսլականը:

Ճորճ (Ջորջ) Սորոսը, եթէ յիշում էք, այս տարուայ Յունուարին Դավոսի ֆորումում յայտարարութիւն արեց եւ քննադատեց Թրամփին, Պուտինին, Չինաստանի նախագահին եւ Հնդկաստանի վարչապետին: Ինչո՞ւ հենց նրանց, որովհետեւ այս չորսը ազգային մտածելակերպ ունեն:

Ես կարծում եմ, որ Սորոսի գրասենեակը Հայաստանում պէտք է փակուի: Տարեկան 2-3 միլիոն դոլարով, ինչը չնչին գումար է, մեզ վերահսկում են ու իրենց ապազգային ու կործանարար ծրագրերն են առաջ տանում:

**-Ի՞նչ էք կարծում, մօտ ապագայում հնարաւո՞ր է Հայաստանում իշխանափոխութիւն եւ նոր, ազգային իշխանութեան ձեւաւորում: Արդեօ՞ք պատրաստ է հասարակութիւնը այդ փոփոխութեանը, պատրաստ են այդ փոփոխութեանը քաղաքական ուժերը:**

-Ժողովուրդը պէտք է հասկանայ, թէ այս մարդիկ ովքեր են, ովքեր են նրանց հետեւում կանգնած, եւ որքանով է շահելու ինքը՝ ժողովուրդը: Երբ որ իրականութիւնը փաստերով ցոյց տաս, ժողովուրդը կը հասկանայ, բայց գուցէ մինչեւ դանակը ոսկորին չհասնի, ոտքի չի կանգնի: Ժողովուրդը պէտք է համոզուի, որ այս իշխանութիւնը ապականած եւ փտած է (կոռումպացուած ), ապազգային եւ ծառայում է օտար շահերի:

Իսկ քաղաքական ուժերը, ազգային ուժերը պէտք է համախմբուեն՝ մի կողմ թողնելով իրենց նեղ շահերը: Պէտք է ժողովրդի հետ խօսեն մեր երկրի ապագայ տեսիլքի մասին եւ այն մասին, թէ ի՞նչ է պէտք անել: Ժողովուրդը պէտք է տեսնի այլընտրանք եւ պէտք է արթնանայ:

# Comments

**Zepyur** – 2020-09-17 10:37:47
We all remember how Pashinyan became Prime Minister. When he was on the side of the demonstrators, their rights and voices mattered. Now for two years the locals and others have carried out protests voicing their objections to mining in their own town, and yet their calls fall on deaf ears! The annulment costs vs. the environmental consequences are clear choice points. The previous government left massive problems, the problem of having to pay for Amulsar should have been added to the already large bill carried forward. Most of all however, the rights of locals who have not agreed to the mine should have been put in the forefront! I can't speculate on why he 'seems' indecisive. Transparency was one of the main commitments he promised in 2018. What changed since then? That's my question.

**Vahe** – 2020-09-16 09:32:13
Zeepuyr No, I am not suggesting you thank the PM Pachinyan government for not excersizing force on demonstrators who have every right to demonstrate. How is it? I wonder, that you thought I am suggesting such a thing. Why do you think that the PM Pachinyan government is vacillating on the issue of Amulsar mining? Vahe

**Zepyur** – 2020-09-15 15:57:30
Vahe do you suggest we thank Pashinyan for not exercising force on demonstrators who have every right to protest? Pashinyan has the ability to bring the Amulsar issue to an end but has not done so, question is why?! Amulsar was just one example, there is a list of issues with him and his government!!

**Vahe** – 2020-09-14 14:13:15
in fairness we should point out that PM Pashinyan government inherited Amuslsar mining issue. The mining contracts were signed with the blessing of the President Sargyan government. For all I know, for the past two years, the mining in Amulsar have remained in limbo. The PM Pachinyan government has not exercised force to dispel the entrenched demonstrators nor has it annulled the contracts. ARF has voiced its concern about the possible environmental concerns and yet has not taken a stand against it but has advocated having a national referendum, which is the easiest way to cop out the issue. There appear to be international laws regarding mining contracts and their annulment appears to be costly. Criticizing PM Pachinyan government for its indecisiveness over the Amulsar minign issue is the easiest thing to do and hence its echoed.



**Ազատամիտ** – 2020-09-14 11:55:01
Ընդհանուր յօդուածին համակարծիք եմ, աւելացնելով որ քննադատելը առանց կոնկրետ և յստակ լուծում-առաջարկութիւնների՝ դիւրին է: Ենթադրելով, որ Պարոն Պրոնոզեանը չի մտածում նախկին թալանողների վերադարձին, չի ակնարկում ներկայիս գոյութիւն ունեցող ուժերի, որպէսզի կարողանան լինել այլընտրանքային (alternative) աւելի լաւ իշխանութիւններ Հայրենիքը առաջացնելու և իրականացնելու իր շատ ճիշտ գաղափարները: Նիկոլ Փաշինյանի իշխանութիւնը, իր բոլոր թերութիւններով, գոնէ թողնում է այդ յոյսը կատարուելու ապագայում `ինչպէս եղել են պատմութեան ուրիշ յեղափոխութիւններում, երբ նոր ուժեր ստեղծուեն ու ներկայացնեն նոր առաջարկներ:



**Վահէ** – 2020-09-14 09:40:31
Գործի պայուսակը ձեռքը, Հանրապետութեան Հրապարակին վրայ նկարուած, շէնքով շնորհքով մարդու մը կը նմանի, որ Հայաստան եկած է ոչ թէ որպէս զբօսաշրջիկ այլ կարեւոր առաքելութեան մը համար՝ բայց ճիշդ ես, եթէ խելքը ու գլուխը տեղը ըլլար այսպիսի յիմարութիւններ չէր արտայայտեր:



**Zepyur** – 2020-09-14 09:36:45
There is utter dissapointment in the hearts of many Armenians after the velvet revolution where thousands risked their lives to bring changes to Armenia!! There are thousands of questions why the government is behaving this way, walking back on every word and every promise and viewpoint for which the people voted. They did not vote for the person but for the change they believed in! Yet others are completely blind towards every single failure, every single breech of promise, and are governed by trust and good faith! Time will show the truth but we are running out of time! One of the points I disagree on in this article is that Trump and Putin have a nation building agenda, e.t.c. They may disguise under such pretense, just like Pashinyan who writes cheap nationalistic lyrics for Serj Tankian to sing yet when it comes to saving the nature and water of Armenia he is reluctant to stop Amulsar from happening!! Regarding Soros, there should be proof!! Why is Soros relevant when actions speak for themselves!!



**Արմենակ** – 2020-09-14 07:05:55
Այս Պորոնոզեանը փորի ցաւ մը ունի, բայց թէ ճիշդ ի՞նչ է՝ յայտնի չէ: Խելքը գլուխը մարդը այսպիսի յիմարութիւններ չ'արտայայտեր: